



178. ԴԱՐՎԻԾԻՆ ԽՈՒՄԵՐՔԸ

Մին քյանսիր մարթ ա իլնլ շատ ըշխըդասեր, էս մարթը ուրան կնգանը նհետ հըրըվըններին հետի ննքյարոթուն, փահլայոթուն ին անում, հոն հետի ըշխադում ին ուրանց հախը օղում շին, թողում ին տընըտոթոնլ ինսափին, հինլ վեր տամ ին, եր ին օնում, կյամ տոն ուրանց քոլը յուլա տանում: Շատ վախտ էլ մարթը-կնեկ քյնում ին քոլերան շըլնկավ ճախա-մախա հըվաքում, պոթուն համ պինըցնում ին, համ էլ հըրըվըններին յրան ծախում: Ըտրանց տանը շորս վնդանի հեյվան շի կար, միննկ մին կատու ունին: Ուրոթյունը վեր պըրանում ին քոն ինեկ, կատուն վընդըրներին դաթավը նի էր մըննում տրանց ծոցը, մըմըռոցը քըցում: Մարթը-կնեկ կատվին շատ ին սոթում, ընդրա քյնփին նի շին կյամ, դե հի՞նլ ընին, ուրանց խոխան էլ էտ կատուն էր: Օխտը տարի կիներ, վեր փսակվալ ին, ամմա կնեկը խոխա շեր պոթում:

Մին ցորս օր մարթը կնեկ քյննցալ ին քոլը ճախի: Սաղ քոլը վնեդի տակ տվին, շոր ճախ շի ճըրեցին: Սոված ին, համ էլ շատ ման կյանն բըզմըալ ին: Նստեցին մին ծառի տակ, վեր դինջանան, համ էլ մին թիքն հացը պանիր օտեն: Օտիլիս, էտ մարթին աշկը ինգլնվ մին շոր քյնթոկի յրան: Կընգանը նշանց տվավ, թիւ.—Եր կաց, ա կնեկ, էտ շոր քյնթոկը քանդենք տոն օնենք, կուտրատենք, էրկուսիս շեւակըն էլ կըղըդի, կըշըլնկենք քյնանք տոն:

Տեղնարան երկըցան, էտ քյնթունկին շորս ղուր քընդեցին, լըն-
գըհրեցին, շըղըհրեցին, տես ու տեն քըշեցին, էրկու սըհաթ շըր-
շըրվեցին, քըթնընթում կորան, վերը զոռավ տըղըհան ըրին: Կնե-
կը քյնթունկին տակին եշեց, տեսավ հենա ընդեղ-մին մեծ սանդուղ
ա յրովում: Քյնթունկը պուկեցին քցեցին էն ղուր, սանդուղը պաց
ըրին, տեսան մեյր լիթր տեղին վեակի: Տըրանց աշկըրնին շաղ-
վեց, կընգանը օշը ուրխունալան քյնաց, մարթը ընդրա ճակատը
ծուն քցեց, ետ պերավ:

Հրկոթանն էլ փոխաննին հընեցին, փոխկերթը կըպեցին, տա-
ռավ էրկու խուրչին: Վեակուն կեսը տղվըրեցին էտ փոխան-խուր-
չիններումը: Մընացած վեակին սանդուղավ էլհա թըղեցին, քյն-
թունկը տըրան յրան:

Փոխան-խուրչիննին վեակավ լիթը քըցեցին ոււըրներավը
ղըթրիգյատեմ տընթաընթալավ պերին հըսցրին տուն: Մըթնած էր,
վեր տոն հըսան, ուրանց բախտան վեշ մին մարթ չի չըհեց: էքսի
օրը էրկու խուրչին եր կալան, քյնացին մնացած վեակին էլ պերին:
էս քյնսիր մարթը բնրգան հրուտացավ, տանով ուրանց եր-
գյիրին լոխճան հարուտը:

Քյնաց քաղաք մին թաքավերի պըլատի թանխա տոն առավ,
պատերն ան փնլաքյաննին մառմառ քարից էր շինած, տասը
ղուլուղի փռեց, փայտոն առավ ուրան յորդա-քյնհլան ծիանքա-
վը, տընամեշ առան օթաղնին լցրին: Խորասանի խալիշեքավ, սաղ
սեղանավ, պատկերներավ տոնը նըխշեցին: Փայտոն նստած սաղ
օրը մարթը-կնեկ ման ին կյամ, շտեղ մին նախշուն, լավ պան
էր պըտահում, առնում ին, պնրոնմ տոն:

էտքան հըրստոթունը ընգյամ ընդրանց ծերթը, ամմա հի՛նշ
օքուտ, վեր մին խոխա շունին: Շատ հնքիմների կոխկ քյնացին,
հու հինշ ասեց ըրին, պան չի տուն եկը:

Մին ուրոնդուն, տրանց տնունը թըկեցին, մարթը եր կըցավ,
տնունը պացավ, տեսավ մին դանրվիշ էրկու ծիլ լոխտա փռած
կաղնած, դանրվիշը թա.—Ախպե՛ր, մին տեղ շես տա՛լ էս քյշեր
իմ ծիանցը նհետ կենամ, ըռավետը քյնամ, հինշ վեր հախն ա,
կըտամ:

—Խե շեմ տալ, ղոնաղը աստըծունն ա, ծիանքը քաշի կյն-
մոնը կապի, էտ անլուզոն հեյվաննին մեխկըն են, առաջ ընդրանց
տղվարենք, ենդան քնը:

Միանքը տարան կյնմը, պեռները եր կալան, ալափը լցրին
ախուրը, ծիանքը ըսկըսեցին ղըհըրհալի օտիլ: Ինքը դանրվիշին

նհետ պըցրացան տոն: էս դարվիշին լած պագիվ ըրին, կերան, խմեցին, զրոնց ըրին: էս մարթը դարվիշին պատմեց ուրանց դարձը, մտածում էր, թա՛. «Հու վա գյուղում, բնւթյա դարվիշը մին ճար գիգա, ասի ընրանց խոխա ինձ»:

Լսելան հտը դարվիշը ասեց.—Վեր իմ ասածը անեք, ծեղ խոխա կինի:

—Բա խե շենք անիլ, կանենք, հինշ վեր ասես կանենք, հինշ-նեքսը ա պակաս, փառք ըստուծու:

—էն մեծ ութաղումը խալիքը մենգեցեք, խուխի խաղալիքնի պերեք եր ըծեցեք էտ խալուցը յրան, տոնք ծեղ հետի դինշ քոն իլեք: էքուց ըռավետը վեր եր կենաք, տրսնալու վեք էրկու քոթալ վըսկըքյանքյուն խոխա հենա գյրոցը յրան խաղալիքներավը խաղ են անում: Իմ պայմանը էնա, վեր էտ խովսորցան մինը ինձ նհետ տնիլու վեմ, մհեկանց ասում եմ, վեր էքուց խոսկ ու զըրոնց շինի: Մհեկ օղում եք ըրեք, օղում շեք, տոնք եք գյուղում:

Մարթը-կնեկ ուրուր իրեսի յիշեցին, հըվատում շին, թա՛ թը-հենց պան կինի: Մարթը ասեց.—Բա էտ ա մին տըծար կո՛րծ, խե շեմ անիլ, ա կնեկ, տոն խալիքը մենգեի, ես հեսա կյանմ եմ:

Տոն եկը, փայտոնը նստեց, քյանց դոնքյունենեքան մին էշի պեռնը խաղալիքնի առավ, փայտոնավը պերածվ, եր ըծեցին խալի-լոցը յրան: Դարվիշին տեղերը քըցեցին ըռանձին օթաղում, ուրանք էլ քյանցին ուրանց օթաղումը քոն իլան:

Քըշըհանա ծեքը-ծեքին եր կըցան, քյանցին տեսան, դոնքը, վեր էրկու կըռըզնոտ մըգերավ խոխա հեն ա խալիլուցը յրան խաղալիքներավը խաղ են անում: Կարալ շեմ ասի, թա՛ ըտրանք հիշքան ուրխացան, յրա պըրծան ուրոնը ծեքա խեցին, խտըտեցին, պըշպըռոցեցին:

Դարվիշը ուրան պայմաննու գյոնը, խուխին մինը եր կալավ, թա՛—Դե, ես քյանցի, էտ խուխին հախը թողում եմ իմ էրկու ծիան-քը, մին էլ երկու թոր ծեք խուխին հետի, վեր մըծանա, կըտաք ուրան:

էս մարթը մին էլ ուրան կնեկը շատ դանշանք ըրին, վեր դարվիշը խուխին մինը տանի վեշ, ըսեցին ըտրա քաշավը վեսկի տանք, թող խոխան կենա: Դարվիշը զաիլ շի կըցավ, խուխին մինը եր կալավ: քյանց:

էս խոխան օրը տըրեկան էր մըծանում, քսան օր անց կըցավ, էտ խոխան քըսան տըրըկանի դանգար տանում:

էս բախտավեր մարթը, վեր բոնդան հրուստացավ, խուխա-տեք տանում, մին օր էլ ծին նիհ իլան, քյանց քյանց աշխար տըս-

նալի: Շատ սար ու քու, ծիրեր ման եկավ, վերը մին մեծ քուի խորքում տեսավ մին մեծ ըմպրաթ: Ծին քյշեց, քյնանց էտ ըմբրաթին հյաթումը եր եկավ, ծին մին սոնան կապեց, ինքը քու-նանց նի մըտավ էտ ըմբրաթին օթաղնին: Լոխ օթաղներին տըռ-ները կըրնգահան պանց էր, ամմա վեշ մարթ կար, վեշ սան, վեշ սամնը:

Օթաղնին լիքը հըրըստ:թուն էր, մին օթաղ էլ նի մըտավ, տեսավ տեղին վեսկավ լիքը: էտ վեսկան մին խուրչին լցըրեց, քցեց ծինն թարթին, պերավ տոն:

Ասիլ շես, էս վեսկուն տերը մին իրեք կլխանի օշափ ա, ինքը վըրսատեղ ա իլալ, վեր էս մարթը եկալ ա քյնանցնալ, Կյանը բնատան հյաթումը կաղնեց, վթվեթաց, շորս դուլին եշեց, թա.— Մըրթավես ա կյամ, կա շի կա, իմ տոնըս ինսան ա նի մըտալ: Օթաղնին ման եկը, վեշ մին պան պըկասալ շեր, նի մտավ վես-կուն օթաղը, դաստին կլխի ընգյավ, ասեց.— Վեսկաս մին խուր-չին կյուղացալ են, լավ, հու վեր, վեր ա, իմ ծերթաս կարալ շի պրծընի, մին էլ ա կյանն:

Օշափը մին քանի օր կյողը կըցած բոնանը պահեց: շենգ օր անց կընալան ետը, էս մարթը ծին նիհ իլավ, թա— քյնան էն վես-կան մին խուրչին էլ պրեմ: Կրքըներին դաթումը շիրան էր մընա-ցալ, գյոնդոն էր, թա աման դոնոն կյետը քյանթան կըպիրի: էս դոնոն օշափը ընդրա քըթըծըկերավը եր ածեց: Լհան տեղ հանիլը բնատան օշափը ընդրա խըրկոթան պենդ փոնեց.— Արն, էս տոն վե՞ս իմ վեսկին տարալ: էն էլ թա.— Շա, քեզ մատաղ ինեմ, դա-լաթ եմ ըրալ, ըստեղ մարթ շի կար, գլիդանցի թա տեր շոնի, էս դոնում ինձ բախշի:

— Շի՞նը բախշեմ, քունձոտ, հենգ օր ա վերսի շեմ քյնոն, քեզ եմ սպասում, վեր կյան տաք-տաք հում մես օտեմ: էս ըսի-լան ետը, էտ մարթին կուտուր-կուտուր ըրավ, կեսը հում-հում կերավ, կեսըն էլ խոթված ըրավ կերավ:

Կնեկը տանը մին շանփաթ սպասում էր, մարթը լրովաց վեշ, վախում էր, թա խուփին անշուկը քցի, վալ թան էն էլ եր կենա, հորը ենդան քյնան, մին օյին էլ ընդրա կըլնիլը կյա:

Շենգինչի օրը էտ խոխան նի մըտավ մին պառավ կնգա բոս-տան, սկսեց խակ տամբոնը քաղիլ: Պառավը տոնա եկը ընդրա լրան թընթորաց.— Ա խըրխուռ ըլած, էտ խակ տամբոնը հո՞ր ես քաղում, քու հեր քյնանցնալ ա կորալ, ընդրա ենդան քյնան, էտ հի՞նշ պանի լրան ես, եքյան մարթ ես, բա համանշում շե՞ս:

—Նանի, անիսկը մի տալ, էլ քաղիլ չեմ, մինակ ինձ ասի, տեսնամ ես հունց քյնամ հորըս հնդան, հինչւմ քյնամ, ծի շտեղա՞ն ճարեմ:

—Ա՛րըղասըլ, ծիտ հենն ծեր կյաճմամը կապած, թորըն էլ ընդեղ կյաղած, քյնն քու նանու յախան հըվաքի, ընդրանա օղի, վեր տավել, վըխծըցըրու:

Վաղտալավ եկավ տոն, մորը յրան պենդ կընըվեց, թա՛ւ.—Նանի, էս սահթիս ծիտ տեղն էլ ասի, թորիս տեղն էլ, քյննամ եմ ապուրը հնդան:

Մերը մընաց գյոննաքար, հըցըրուց.—Բալա շան էտ վեր բուռացածը քեղ ասեց, թա՛ւ ծի օնես, բա քեղ ծի շտեղա՞ն ա:

—Նանի, դե էլ ըրգյնցընումիլ, շոնտ ըրա տեղն ասի, թանընն կըտամ քեղ էլ ըստեղ պասմիշ կանեմ:

Մերը վըխեիլան, տղին տարավ կյոնմը, ծին էլ տվավ, թորըն էլ:

Թորը կապեց, ծին նիհ իլավ, տոնս եկը քյոնչան, էս ծին մին աշկը ճպիլումը հըցըրուց օշափին ըմարաթը, օշափը հեռվից տեսավ էտ խուխին, ուրխացավ, մտկումը ասեց.—էս հի՛նչ լավ ա, զակուսկիս ուրան վենդավը եկը: Օգեց թա՛ւ ծիան երթաշի, էտ տըղան ընդրան հովսալն չի տվավ: Նհենց թորավ հըցըրուց մեշ տեղի կլխին, վեր էրկու կես տառնավ: Օշափը թա՛ւ.—Մին էլ թըխի, մին էլ թըխի: Տղան, թա՛ւ.—Մինն էլ բու ա, իմ նանի ինձ մին դնում ա պերալ:

Օշափը սատկեց, էս տղան ծիան եր եկավ, ծին կապեց սոննան, ինքը նի մտավ օշափին տոնը, տեսավ ըշխարքիս հըրստոթունը էտ ութուղներումը, նի մըտավ մին օթաղ, տեսավ վեսկավ լիքը: Կըլխի ընգյավ, վեր ուրան ապերը վեսկին ըտեղան ա պերալ, էրկուհինչի դոննումըն էլ վեր եկալ ա, ընգյալ ա էտ հարամուն ըռեխը:

Լաց իլավ, հնդան ուրան ծին երիլավ, քյնեց, եկը տոն, հինչ տեսալ էր հինչ ըրալ, մորը նաղը ըրավ: Ուրանց տոնը հըվըքեցին, քոշեցին քյնացին օշափին տոնը:

Մին օր էս տղին միըր տանը մինակ էր մնացալ, երկըցավ օթաղին ման եկը, տեսավ ընդեղ մին օթաղ կա, հենն մին մեծ քիլիդավ կապած, ինքը-ինքը տըռըզեց, խռովեց, գիզաց, թա՛ւ տըղան ուրան անա սեկրետ ա պահում: Տղան վեր եկը, ընդրան հըրցըրուց.—Բալա՛, տոն խե ինձանա սեկրետ ես պահում, էն ղփուլը յրան տաղումը հի՛նչ ես պահում: Բա ես քըզանա թաքուն պան կը պահեմ:

—Ա՛ նանի, հի՛նչ կա, վեր կլաղեմ, իշկի ես էլ չեմ գոհոգում, թա՛ ընդեղ հի՛նչ կա: Ես կործ օնեմ, քյնալու՛ վեմ, տո՛ւ քյնա պաց ըրա տես ընդեղ հի՛նչ կա:

Տղին տանան քյնալան հտը, էտ կնեկը մին դաստան պլանի հր կալավ, քյնաց շրշարվեց, մին պլանավ էտ կապ տոնուր պաց ըրավ, տեսավ հենն ընդեղ մին քրաստուն կլխանի օշափ քոն իլան: Վրխնիլան նհետ ետ տանում տոնուր կապեց: Մին խիւն վախտ վեր անց կըցավ, էս կընգանը տեղը տեղ չի տվավ, մին էլ քյնաց տոնուր պացավ, տեսավ օշափը աշկերը պացալ ա, ուրան ա՛ եշում, համ էլ ծիծաղում: էտ կընեկը սրտը պլնդվեց, քյնաց օշափին կոխկը, սիլի-բիլի ըրին, սիրը հրվեցին: Մին քանի վախտան ետը էս կնեկը մին խոխա պերավ, հենց էր լհա էն դարվիշին տալած խոխան ինի:

Տղան վեր տոն եկը, ընդրան ասեց, թա՛.—Դարվիշը քու կու՛նի ախպուրը ետ ա պերալ: Տղան շատ ուրխացավ, ասեց.—էս լնվ ըլնվ, ախպերըս էլ եկը, մըտեղ կապրենք: էտ կու՛նի խոխան էլ օրը մին տըրեկանի ղըգար մըծանում էր: Մին քանի օր անց կընալան ետը կու՛նի ախպերն էլ մեծ տղա տանում:

Մին օր մեծ ախպերը ծին նիհ ըլնվ, թորը կապեց, թա՛.—Ես քյնում եմ աշխարքը ման կլամ, բախտըս փորցեմ:

Շատ քյնաց, թա՛ քիշ, գիղվալ չի, մին էլ տեսավ ըռալին մին քաղաք ա յըրովում, ծին քյշեց քյնաց մին պառավ կընգա տան մղակում կաղենց: Պըռավին էրկու վեակի տվավ, թա՛.—Մին տեղ տուր դինչանամ, ծիս էլ քաշի կյումըտ, կյարի, խոտ ածի առալը, թող օտի, ինձ հետի էլ մին աման ճուր պեր խմեմ, ծարավ եմ: Պառավն էլ, թա՛.—Բալա շան, հի՛նչ օղես, կարամ ճարի, ամմա ճուրը կարալ չեմ պիրեմ, էս քըղաքում ճուր չի կա: Մին թա՛ք ախպուր կա, ընդրա միշին հենա մին հարամի պրանեծ, օրանը մին ախճիկ ա կու տամ, ընդրանա ետը քըղաքին ժըղովուրթին ճուր ա պաց թողում: Էքուց թաքավերին ըխճըկանը սիրան ա, ընդրան էլ վեր լավեց, մին օր էլ ճուր կըտա, ընդրանա ետը հի՛նչ կինի, գոհում չեմ:

Էքսի ըռավետը շոնտ էս տղան եր կըցավ քյնաց ըխպերին դրաղին թաք կըցավ: Թաքավերին ախճիկը պերին, վեր քըցեն հարամուն ըռիսը, հարամին հենց վեր կըլնիսը տոնա ա օնում, վեր էտ ըխճըկանը կու տա, դարվիշին տղան նհենց ա թորը եր պոնում ընդրա վիզին, վեր հարամուն կըլնիսը թոնում ա ընգում թաքա-

վերին բաղը: Հիսպերին նովը առնավ լցվեց: Թաքավերին ախճիկը ծերքը կոխեց առնին մեղք, տոնա կալավ փըշատեց էտ տղին մեշկին, ինքը փախավ տոն:

Ճոնը ըսկսեց օրկուն-օրկուն, քըլթըլթալի քյնալ: Մեծ, կուճի, խոխա-ըրախա յրա տառան ճըրին, խմեցին, կոժնը-կուլա լըցրին տարան:

Թաքավերը հրաման կյրեց, թն.—Հու վեր էն օշափին ըսպանալ ա, իմ ըխճըկանըն էլ ըզադալ, թող մեյդան տոնա կյա, իմ ախճիկըս ընդրա հրթնացուն ա, ուրան հալալ ինի: Ախճիկը հորըն ասեց, թն.—Վեր ժըղովուրթին հըվաքեք, ես էն հարամուն ըսպընողին կը ճնանչեմ:

Ժողովուրթը հըվըթվեցին, Թաքավերին ախճիկը մին-մին եշեց լոխճին միշկին, դարվիշին տղան դաթը ճղիլավ մուտացալ թաքավերին ըխճըկանը, թն.—Ինձ ճնանչուա շե՛ս... Թաքավերին ախճիկը դաստին ճընանչեց, մեշկին եշեց, ծերքան փռնեց, տարավ հորը կոխկը, թն.—Օշափին սպանուղը էս գյնզը տղան էր, տեսե՞ք, հենա է, իմ մընդերիս տեղերը միշկին յրովում ա, վեր օշափին առնավը նշան եմ ըրալ:

Թաքավերն էլ հավան կըցալ դարվիշին տղին: Փըսըկեցին, տնոնով թաքավերին փեսան:

Փըսկվիլան ետը, վեր մըղրամիսը պըրծավ, դարվիշին տղան քյնաց մորը, ախպուրը տըսնալի: Հինշ վեր կըլխավը անց էր կըցալ, նաղըն ըրավ, ենդան էլ թն.—Ծկեք հվաքվենք քյնանք թաքավերին պըլատումը ապրենք: Մերը ռազի չի կցավ, ասեց.—Ծս անջախ եմ տոն տըրնլ, իմ տոնս էլ քընդիլու շեմ, ես խուփիս նհետը ըստեղ կապրեմ, տոն վել կըքյնաս թաքավերին տանը կապրես, շոնտ-շոնտ էլ կը կյանս մեզ տըսնալի:

Մին օր, էս վել իլնծ կնեկը նի ա մըննում օշափին պոնը էրգյան-պարնկ զըրոնց անում: Կուճի տղան, տըռնին քըմական թաքուն անշուկ ա օնում, հինշ վեր խոսում են, լսում ա: Օշափըն ասում ա.—Վեր մին էլ մեծ տղատ տոն կյա, ես տոնս եմ կյանոն խնչալավըս տամ կլոխը թըռցնեմ: Մերըն էլ ասում ա.—Հան լնով էլ կանես:

Էս պննը լսիլն ետը էս խոխան մըտկումը տըննեմ ա ախպուրը էտ փուրցանքան ըզադի:

Մին քանի օրան ետը, մեծ ախպերը ըտրանց մղակավը նի ա մըննում: Նի մըննիլը բաստան, կուճի ախպերը վազ ա տամ ընդրա առաջը, լոք տամ ուսերին նըստում:

Օշափը տրոնին դաթաժը տեսնում ա, էլ տոնա շի կյամ, ասում ա, վեր թխեմ, իմ խուփսիս նի կը կյամ:

Օշափը մին էլ ա զըրոնց անում կընգանը նհետ, ամամ էն կուճի պիճը էլլհա յա անշուկ օնում, հինշ վեր ասում են, լսում: Օշափըն ասում ա.—էս դննում էլ վեր կյա, ես մին դարադուզուն եմ տրոնալու, ենդան քնամ, մին օր ճնապա քնանլան հտը շտեղ վեր հաա, ընդեղ էլ ըսպընիլու վեմ:

Դանժիշին տղին սերտը պանակ էր, շուտ-շուտ կյամ էր մորը, ախպուրը տըսնալի: Մին հետ էլ եկը զիրավ հընցավ, վեր քնան, կուճի ախպերը ասեց.—Ախպեր շան, տոն շտեղ վեր քննում ես, ինձ էլ տար: Ախպերը ընդրա քնեփին օղեց վեշ նի կյա, նհետը տարավ: Դըրըրգյազեմ հասն մին մեծ գյոլի: Միանցան եր եկին, ժիանցը մուր տվին, կյեր տվին, ուրանք էլ կերան: Կուճինը եշեց, տեսավ երգյինքավը հեն ա մին դարադուզուն թուած զըրա ուրանց ա կյամ, մեծ ախպուրըն ասեց.—էն դուշին թողաս վեշ մուտանա, թըվանգը յրա ըրա ըսպանի, թանընա ինքն ա քեզ ըսպընիլու:

Դանժիշին տղան թըվանգը տեմ ըրավ, նշան տըրնով տըրըք-ցըրուց, դարադուզունը ցրե եկավ, ընդրան մին յղալի կուտուրը թուավ քնանց ընգյավ ուրանց տոն:

Դանժիշին տըղերքը ըտեղան ետ տանան եկին տոն: Ըտրանց մերը խորակ էփեց: Ղարաղըղունին մասվըն էլ ըտանձին խորակ շինեց պերավ տըրնով մեծ տղին ըռալին, թա.—էս ճանը քըզ հետի եմ էփան, յղալի ճան ա կեր: Կուճի տղան էտ ամանը տըրնով մորըն ըռալին, թա.—Չէ, նանի, էտ ըմանին ճանը տոն պետկա օտես: Մերը շատ խուճիկ-մուճիկ ըրավ, վեր մեծ տղան օտի, անան շի եկը: Մեծ ախպերըն էլ կըլիսի ինգյավ, ինքըն էլ զտեց, վեր էտ ըմանին ճանը մերը օտի:

Ճարը կըտրած, էտ կնեկը քթլը եր կալավ, ըսկսեց օտիլ: Մին քանի քըթլ վեր կերավ, ըսկըսեց օռլիլ, օռավ-օռավ, տըկը-զեց, բուրդան տրաքեց ցրե եկը: Ընդրա կուտուրտանքը հըվըքեցին տարան թըղեցին:

Դանժիշին տղան, հինշ կար-շի կար թողեց կուճի ախպուրը, ինքը քնանց ուրան կընգանը կոխկը: Թաքավերի կյանք էր քաշում, թաքավերի, նազիր-վեզիրների նհետ նստում, երկենում: Մին կյանքունքան օր, էս դանժիշին տղան ծին նստեց, թա, քնալ պիտեմ աշխարքը ման կյամ:

Մին քանի օր ճնապա քնանց, ընգյավ մին խոր ծիր, ընդեղան

էլ տոնս եկը, նի մտաւ մին մթնն, քու: Մին սաղ օր էտ քուին մի-
շաւը քնաց, տեսաւ ուրան շորս դուր ծիւղեր, փիաղա մարթիք
են, լոխունքն էլ քրտացած: Ընաշան մին պառաւ կնեկ տոնս եկը
մին փլատարատին տվող մշակ ծերքին: Էս պառաւը ծերքին մշա-
կը պըցըրցուց, մին էլ քըշուցուց, թիւտիմ ըրաւ, թաքաւերին
փըսին ուրան ծիւղը քար շինեց:

Քշեբը ընդրա կուճի ախպերը ըրազումը տեսաւ, յանի քի
մեծ ախպերը նեղ տեղ ա ընգյալ, ուրան ա կանչում, ասում ա.—
Սերքաս փոնի եր կենամ:

Քընըտեղան եր թրոսաւ, թահդի-թահդի շնորը կլեցաւ, քնաց
կյոնը, ծին վեր ընդրան կլալը տեսաւ, խըրխընշաց, վընդերաւը
տափը քանդեց:

Մին տոնս քաշեց, նստեց, թա.—Չալիկ, դե քեզ տեսնամ, հը-
սըցրու թաքաւերին տոնը: Մին թոսաւ երգինքը, մին սհաթում պե-
րաւ հըսըրուց թաքաւերին տոնը:

Թաքաւերը, ուրան ախճիկը, նազիր-վեզիրնին, վեր ընդրան
տեսան, գիդացին, թա եկուղը ուրանց փեսան ա: Ինքըն էլ չի
ասեց, վեր ինքը ուրանց փսին ախպերն ա:

Ուրոնգյոնը տեղերը քըցեցին, ինքը նի մըտաւ թաքաւերին
ըխճըկանը ծոցը, թորը հանեց տըրւով էրկուսին դաթաւը, ընդրան
ասեց.—Սա քու տեքըրըտ եմ, քյոնում եմ ախպուրս հարային, ընդ-
րանա փիս արաղ եմ տեսաւ, հալա օշովին ասես վել:

Ընաւետը շոնտ էն քաշտան, լոխճին թողեց քոն իւծ, ինքը
շնորը կլեցաւ, քնաց նստեց ծին, թա.—Չալիկ, քեզ տեսնամ,
հըսըրու ախպուրըս կոշտը: Մին թոսաւ երգինքը, էրկու սհաթում
հսաւ պըռաւին քուին, քըշացաւ քուին իրեսաւը շոռ տվաւ: Միին
միշկան էս պիճը լւով վաճրաւ ուրդ ըրաւ, տեսաւ քուին մեշը լիքը
ծիւղեր, փիաղա մարթիք են կղնոտած, լոխունքըն էլ քար կըտ-
րած: Մին քանի հետ քուին կլսաւը շրտըշորտի ըրաւ, ուրան
ախպուրը ընդրանց միին ճընանչեց: Եշեց տեսաւ մին պառաւ
կնեկ, մին փըսաղան մշակ ծերքին հեն ա ընդրանց դըթերաւը
ման ա կլամ, համ էլ ուրան ա եշում: Մին քշեց թուշ դըբաւ էտ
պառաւը, հենց հըսնիլը բանտան թորը լրա պերաւ նհենց թխեց,
վեր ընդրա ծերքին մշակը փըշուր-փըշուր տանաւ, ինքը տեղն
ու տեղը եր ինգյաւ, հոքին տըվաւ: Քար տանած ժըղովուրթը
զըթնացաւ, լոխունքը շատ-շատ շնուրակալ ութն ըրին, քյոն-
ցին:

Էրկու ախպեր ուրոնը կուլերաւ ընգյան, ենդան ծիւղը նստե-
ցին, եկին թաքաւերին պալատը:

Թաքավերը, ուրան ախճիկը էրկու ախպուրցը ուրուիւր անա
կարում շին ճոկեն:

Թաքավերը էտ կուճի ախպուրը ուրան հոքավերթի եր կալավ:
Ընդրան էլ փըսակեց՝ մին օրիշ Թաքավերի ախճիկ ուզեցին, մին
շարմաղ հարթը պերին տոն:

Ընդրանք հըսան ուրանց մուրազին, տուք էլ հըսենք ծեր մու-
րազին:

Երգինքան իրեք խնձոր եր ինդլավ, մինր ինձ, էրկուսը ծեղ,
եր կալեք կերեք:

